ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 95/11-6 «10» 01 2025թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ,
Արգիշտի Մեխակյանին

Հարգելի՛ պարոն Մեխակյան

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ բնակչության կողմից դաշտերում և այգիներում այրման միջոցով իրականացվում է հողատարածքների մաքրման աշխատանքներ, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության կողմից Արմավիրի մարզի համայնքներում անցկացնել աշխատաժողովներ:

Աշխատաժողովների ընթացքում կիրականացվեն արտակարգ իրավիճակների կանխարգելման, խոտի այրման վնասները, դրա կանխարգելման կարևորությունը թեմաներով և ԱԻ ու ՔՊ ոլորտի հիմնահարցերով քննարկումներ:

Խնդրում եմ Ձեր միջնորդությունը Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին՝ համաձայն կցված ժամանակացույցի, համայնքներում աշխատաժողովների պատշաճ կազմակերպման ուղղությամբ:

Կից Ձեզ է ներկայացվում դաշտերի և այգիների խոտի այրման վնասները և դրա կանխարգելման կարևորության վերաբերյալ տեղեկատվություն մարզային և համայնքային պաշտոնական կայքերի միջոցով բնակչությանը իրազեկման համար:

0901, armavirmpv@gmail.com, Հեռ.՝ 0237-2-28-55, ք. Արմավիր Աբովյան 151

Առդիր 1 էլեկտրոնային նյութ և աշխատաժողովների անցկացման ժամանակացույցը:

Հարգանքով՝
Պեփի պարտականությունների
ժամանակավոր կատարող,

փ/ծ փոխգնդապետ Մուշեղ Պետրոսյան

Կատարող՝ ԲՊ բաժնի պետ,
փ/ծ փոխգնդապետ Գառնիկ Մկրտչյան
հեռ.՝ 093-02-15-22

Ժամանակացույց

ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության կողմից Արմավիրի մարզի համայնքներում անցկացվելիք աշխատաժողովների

1. Արաքս համայնք՝ 20.01.2025թ. ժամը՝ 15:00
2. Խոյ համայնք՝ 22.01.2025թ. ժամը՝ 15:00
3. Ֆերիկ համայնք՝ 22.01.2025թ. ժամը՝ 16:30
4. Արմավիր համայնք՝ 24.01.2025թ. ժամը՝ 14:30
5. Մեծամոր համայնք՝ 24.01.2025թ. ժամը՝ 16:00
6. Փարաքար համայնք՝ 27.01.2025թ. ժամը՝ 12:00
7. Վաղարշապատ համայնք՝ 27.01.2025թ. ժամը՝ 14:30
8. Բաղրամյան համայնք՝ 29.01.2025թ. ժամը՝ 15:00

Ծանոթություն՝ աշխատաժողովներին ապահովել համայնքների ղեկավար կազմը և վարչական ղեկավարների ներկայությունը:

ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ պետի ՊԺԿ,

փ/ծ փոխգնդապետ՝ Մ. Պետրոսյան



Դաշտերի և այգիների խոտի այրման վնասները և դրա կանխարգելման կարևորությունը

Հարգելի բնակիչներ, շատ կարևոր հարց է, մեր հողային ռեսուրսների պահպանությունը և շրջակա միջավայրի պաշտպանությունը: Խոսքը դաշտի խոտի այրման մասին է: Թեև այս գործողությունը երբեմն ընկալվում է որպես հողի մաքրության միջոց, իրականում այն ունի խիստ բացասական հետևանքներ, որոնք կործանարար են թե՛ հողի, թե՛ բնության, թե՛ մարդկանց համար:

Ինչպես է խոտի այրումը ազդում հողի վրա:

1. *Բերրիության կորուստ՝* խոտի այրման ընթացքում հողի վերին շերտում գտնվող օրգանական նյութերը ոչնչանում են: Այս նյութերը հանդիսանում են հիմնական պարարտանյութ, որոնք ապահովում են հողի բերրիությունը: Օրգանական նյութերի կորուստը երկարաժամկետ վնաս է հասցնում հողի բնական վերականգնման ունակությանը:

2. *Օգտակար միկրոօրգանիզմների ոչնչացում՝* հողի բերրիությունը կախված է ոչ միայն սննդանյութերից, այլև միկրոօրգանիզմներից: Դրանք նպաստում են սննդանյութերի շրջանառությանը, բույսերի աճին և հողի առողջությանը: Խոտի այրումը վերացնում է այս օգտակար միկրոօրգանիզմների մեծ մասը:

3. *Հողի կառուցվածքի վնասում՝* այրման արդյունքում հողը կորցնում է իր բնական խոնավությունը և դառնում է խոցելի էրոզիայի հանդեպ: Սա նշանակում է, որ քամին և անձրևաջրերը կարող են հեշտությամբ քայքայել հողի շերտը՝ նվազեցնելով նրա բերրիությունը:

4. *Սննդանյութերի կորուստ խոտի այրման ժամանակ ազոտը և այլ սննդանյութերը դուրս են գալիս մթնոլորտ՝* գազային վիճակում, ինչը բերում է սննդանյութերի հավասարակշռության խախտմանը հողի մեջ:

5. *Կլիմայական փոփոխություններին նպաստում՝* վառման ընթացքում արտանետվող ածխաթթու գազը ոչ միայն աղտոտում է օդը, այլև նպաստում է գլոբալ տաքացմանը, ինչը երկարաժամկետ վնաս է ինչպես բնությանը, այնպես էլ գյուղատնտեսությանը:

Կոչ՝ զերծ մնալ խոտի այրումից՝ մեր հողը մեր կյանքի աղբյուրն է: Այն ապահովում է մեր սնունդը, մեր առողջությունը և մեր սերունդների ապագան: Խոտի այրումը կործանարար ազդեցություն ունի հողի վրա և երկար տարիների ընթացքում կարող է ամբողջովին զրկել այն բերրիությունից: Մի այրեք դաշտի խոտը: Փոխարենը օգտագործեք այն որպես կոմպոստ՝ վերածելով օրգանական պարարտանյութի: Տարածեք տեղեկացվածությունը ձեր հարազատների և ընկերների շրջանում: Հարգեք բնության օրենքները՝ պահպանելով շրջակա միջավայրն ու հողային ռեսուրսները: Ձեր պատասխանատու վարքագիծը կօգնի պահպանել մեր հողը և ապահովել մեր համայնքի կայուն ապագան: Եկեք միասին աշխատենք բնության պաշտպանման և պահպանման համար: